«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 49-րդ կետում «կառուցման տարածքից» բառերից հետո լրացնել «գետի հունից» բառերը.

2) 50-րդ կետում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունի արգելապատնեշների» բառերը.

Հոդված 2. 48.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերում, 4-րդ մասի 4-րդ կետում և 6-րդ մասի 3-րդ կետում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունի արգելապատնեշների» բառերը:

Հոդված 3. 48.4-րդ հոդվածի 1-ին մասում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունի արգելապատնեշների» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից: